

ԿԵՆՍՏԱՆԿԱՆ

Գ Է Ո Ր Գ Ա Պ Տ ՈՒ Լ Լ Ա Ն

ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Շար. տես Բազմ. 1929 էջ 33)

Գ.

1. Աշխարհահռչակ Մովսէսեանի Յովհաննէս Ավագովսկիի իսկական ձեռքով գրած նամակներէն միայն երեք հայերէն նամակներ տնկորուստ մեզի հասած են, իբր պատասխան Ապտուլլահ եղբարց. նա մակնեբը որ գրուած են զրիմեցոց աղաւաղ բարբառով, որքան ալ իրենց պարուսնակութեամբը և գրութեան ոճովն արժէք մը չեն ներկայացներ, բայց իբր իրենց միջև եղած մտերմական բարեկամութեան յայտարար նշան, կարելի չէր անտես առնել, մանաւանդ որ անոնց այլ եւս պատուութեան կը վերաբերին:

Ավագովսկի այս իր երեք թուղթերուն տարեթիւը մոռցած լինելով նշանակել, Գէորգ Ապտուլլահ զայն ինքն իր ձեռքով, լրացուցած է զինքով առաջինին վրայ 1881 թուականը. ահա ուրեմն այդ գիրը, «Բեթերպուրկ հոկտ. 24 — նոյեմ. 6. — Սիրելի և պատվական եւրապրգ Ապտուլլահ. Այսօր ստացաք ցեր սիրուցն նամակը. շատ և շատ շնորակալ եմ հրամանոցը վոր ինձ մոռացած չէք ու ինչպէս որ իսկ բարեկամ քրտանց կը շնորհակարարուիք. ճշմարիտ որ մեծ պատիվ տեսա կախելի կողմանէ, բոլոր Բեթերպուրկի ժողովուրդին և բոլոր ռուսիան, ուրիշ տերու թիւններէ: Ան երկու օրը ըստաց(այ) բոլոր ռուսիան 440 telegram, ուրիշ երկիրներէն իթալիանէն, ֆարսիէն, Ղեռմանիսիան Անկղիսիան 138 տէրէշ շատ ընծաներէն:

Հինկ օր առաջ աստեղի ծովաի 30 ատմիալները տուին ինծի grande diné. ինչպէս որ կրանն ծերերը այսպէս Jubilé եղած չէր Բեթերպուրկի մէջ. այս

ժամանակ հոտ վոր տեսա մէկ պատկեր մեր աստեղի լուսավորիչ եկեղեցիին այս ամառ քաշեր էի:

Պօլսէն ալ ստաց քանի մը telegram. Կ'աղաչեմ հրամանոցը բարեկամ տաց ամէն իմ բարեկամների: Աստուած տա կարելի է վոր եկած տարի մէյմը քամ Պօլսու Աս ծըմեռ մինչև մառտի 20 կը մընանք Բեթերպուրկ, վերջը կը թառնանք իւրբմ. Ճամ ցեր սրտանց բարեկամ՝ Յովսէնէս Ավագովսկի:

Թողութիւն խնթրեմ այսպէս նամակիս, չիգտիմ զրել. աղէկ՝ էկեր կընագ կարթալ ու հասկընալ: Իմ աստեղը S. Petersburg, Pont Anitchkoff maison Zibatchof. J. Aivazovsky.

Բեթերպուրգ 3/15 քետրվ. 1882. Սիրելի եւրապրգ Ապտուլլահ. — Մեղավոր եմ շատ ցեր զիմացը վոր մինչի այս օրը տահա պատասխան զըրած չեմ ցեր սրուցն նամակին: Երեք ամիս է վոր աստեղն ենկ, մառտի վերջերուն Աստուած աջող է նէ կը թառնանք իւրբմ Գէֆէ: Պօլսէն էլլամներէս վերջը կուզէի կատարել ինչ վոր խոստացել էի՝ վոր հրամանուցը ալ հայտնի էր. ժամանակավոր ցրգելուս պատճառը ան էր որ տեսակ տեսակ լուրերը անգիստութեան ցեր մայրաքաղաքը, պատճառ եղան. հիմա վոր ինչպէս կերելի բարի հանկատութիւնը նորէն տեղը առաւ. ինչ վոր հարկավոր կը տեսնուի ինծի իմացտալ, զըրեցէք տեղով, իմ միթըս է և կուզեմ կատարել ինչ վոր ուզացիլ էր վեհրառ կախարը Սուլթանը. իրեն զիս ընթուանածը ան կերպով ինձ համար մեծ մեծ պահտավորութիւն էր:

Սիրելի բաշարին և էմին պէին կը խըրկեմ մէկ մէկ բողբոլի պատկերները, ասունգ կը խըրկեմ թէոսոսիա թառնալէս վերջը:

Այս բողբոլի նամակը կը խընթրեմ հաս-ցունուգ վահան էֆէնտիին աղջիկներուն: — Այս գիրիս պատասխանը խրկեց թէոսոսիա. կարծեմ ավելի ապահով կ'ըլլա ժամանակ ալ կունենազ տեղով իմանալ վերը ինչպէսին ինծ համար. եւայլն:

Կը խընթրէմ ընթուիք իմ շատ բա-րէվըս: Մնամ ցեր բարեկամ Յ. Այվա-զովսքի:

Սերգիս պէյի տեսնելը իմ շատ...

Theodosie 7/13 յուլիսի. Սիրելի և պատմական եխարայը Ապտուլլահ. — Հրա-մանոցը նամակը ըստացա. լըսած ցեր լու-րերը ճշմարիտ է. անցած մատրի ամիս-վան մէջ ձա կարգըվեցա մէկ հայ խա-թունի մը հետ (օրբեվայրի կինն մը), զինքը չէր ճաչնաթ, միայն իրեն բարի անունը շատ շատ լըսեր էի միշտ. հիմա ինչս հան-գիստ ու պահապնոր իմ. առջի կընկանըս հետ 20 տարի է վոր չէր կենաի, չի տեսածըս նորա՝ կա 14 տարի. հինկ տա-րի ալ կա վոր էնմիտաղինին սինտը ու կաթողիկոսը ինծի բաժարմունք տուվին. անպէս որ կըրնաի կարգըվի. միայն շատ կը վախենաի մէկ ուրիշ ասգի հետ կապ-վելու՝ ու նորէն անպահթ լալ: Աստուծով այսպէս եղավ. շնորհուրցածնեբուդ սըր-տանց շնորակալ իմ:

Կը գըրէիգ պատկերգնեբու մասին, կա-խաչեմ երկունս ալ աղէկ սունտուկը դը-նելով տազ Սեվասթօօրլին վարօրը որն որ ամմէն երկու երեգ շարթի պոլիս կը կըս-նըվի, այս չղգենալը Wladimire Գա-րթթանին անունը (Rigy) Ռիթիի աղէկ բարեկամսն է, ես իրեն ալ այս օր կը գըրիմ Սեվասթօօրլ. — Նա ամմէն շարաթ կերթա պոլիս, երկուշարթի ժամը 11 կ'ըլլա Պոլիս, ու ակից ալ չորոգ-շարթի առաջուար կ'իլլէ:

Ես առ ծըմուտ միթգ ունիմ Բարիգ ան-ցնեք ասկից երկու ամիսէն կերթանկ Մօսկվա ու Բեթերպուրկ անկից Բարիգ: Իմ շատ բարեկամ ամմենքուգ: Մնամ

միշտ սըրտանց անթօխելու բարեկամ Յովհաննէս Այվազովսքի:

Շատ ուրախ կըլլաի երբոր կարելի է նէ Պոլիսի լըրագրեներուն մէջ հա Պօլիսի մեր պատրիարքը մէկ շնորակալութեան գիր մը գըրեր էջմիաստ. կաթօղիկօսին որ ինծի ազատեցին առջի պըսակէս ու ատով ավելի նորէն ասգիս մօտըկցա, աս ուղեցա. ծիս պատճառ կա գիտեգ վոր մենգ (divor-
ce) չունենգ ու ինծի արին exéption, կիտիմ վօր Պօլիսին մէկ շնորակալու-թեան նամակ պատրիարքէ ես երեկելի հաի ժողովուրթէն ու լըրագրեներով, կա-թօղիկոսը պիտօր ուրախանա. այս բանը հարկավոր է հիմա. մէկ օր մը տեսնըվինգ նէ կը հայտենմ:

2. Եգիպտոսի Խտիվ Թեւհէր բաշայի և իր տիկնոջ կողմէ եղած յաճախակի հրաւէրներուն վրայ, որոնց կը փափա-քէին նախկին փարաւուններու երկրին մէջ հաստատուած տեսնել լուսանկարչական գործատան Մասնաճիւղ մը՝ Ապտուլլահ եղբարց կողմէ, 1886 թուականին վեր-ջերը՝ Գէորգ և Յովսէփ որոշում կու տան Խտիվին փափարքին համաձայն՝ Եգիպտոս մեկնել: Գահիրէ Հասանէնուն խառ սի-րալիը ընդունելութեամբ մը կը պատուա-սիրուին թէ Խտիվին և թէ իր տիկնոջ էմինէ հանրմին կողմէ, որոնք իրենց սրտագին ուրախութիւնը և գոհութիւնը յայտնելով կ'ըսեն. «Երկար առեմէ ի վեր կը սպասէինք որ Եգիպտոս այցելէք, և ձեր գեղեցիկ գործերէն մենք ևս օգտուինք» են. և առաջին անգամ իրենց լուսանկար-ները հանել տալով առատապէս և իշխա-նարար կը վարձատրեն զանոնք: Գէորգայ եղբարքը՝ Յովսէփ, սեղւոյն օդին անյար-մարութեան պատճառաւ, կը ստիպուի շուտով Պոլիս վերադառնալ, որուն կը փոխանորդէ եղբորորդին Աբրահամը: Ապ-տուլլահներու Գահիրէի այս նոր մասնա-ճիւղը, իրենց ունեցած համարաին արծա-նաւոր ընդունելութեամբ, առաջին օրէն իսկ, փայլուն յաջողութիւն կ'ունենայ, և Խտիվը, որ այնքան համակրալից և մը-տերմական վերաբերում մ'ունէր՝ հազիւ

քառի մ'օրեր անցած էին, կ'իմացնէ Գէորգայ թէ վերին Նիդերլանդներու ղեկավարութիւնը անհապառաճութիւն ունենալով, կը փափաքի որ անպատճառ ինքն ալ միասին ընկերէ պատմական վայրերը լուսանկարելու համար:

3. Թիւրքի բաշայի այս հաճելի հրաւերը՝ սիրով և մեծ ուրախութեամբ կ'ընդունի Գէորգ, քանի որ՝ «այդ պատմական տեղը տեսնելը իմ մասնաւոր փափաքս էր» կ'ըսէ: Որոշեալ օրը կը միանայ խորվական խմբին, իրեն օգնական առնելով եղբոր որդին Աբրահամը: Հինգ շողանաւոր՝ դռնք երկուքը կարասիներու և ուրիշ կարեւոր պաշարներու յատկացուած էին, 1887 յունուարի մէջ՝ Նիդերլանդներէն յառաջելով կը սկսին յառաջել զէպ ի վերին Նիդերլանդներու, Քրեմլին ուղևորութիւնին, կ'ըսէ Գէորգ, զրեթէ 850 քիլոմետր տեղ էր՝ մինչև վատի Հալֆա, Սուտանի սահմանը»:

Խորվի այս հաջողադէպ գիտական ուղևորութեան ընթացքին, Նիդերլանդներու և շուրջը գտնուող գեղջուկները, ինչպէս նաև մերձակայ քաղաքներու բնակիչները խուռն բազմութեամբ կը դիմեն Նիդերլանդներու մօտիկ եզերքները՝ և իրենց ողջունի և ուրախութեան շնորհալից արգասիքներով օղը կը թնդացնէին՝ կեցցէ մեր սիրելի էֆէնտինան, որ զմեզ չմոռնալով կու գայ մեզի այցելել, օրհնեալ ըլլայ «բապունաթալիկ» գոչելով: «Բաց աստի այն քաղաքները ուր կ'այցելէինք, կ'ըսէ, շէխները և մեծամեծները ընդ առաջ ելնելով խորվին, իրենց բարի գաղութի մաղթանքներով կը հրաւիրէին այցելել զխաւոր պաշտօնատեղիները և պարմարանները են, և երեկոյան շքասեղաններով կը պատուաւորէին, ամէն տեղ յաղթական կամարներ, դրօշազարդութիւններ, լուսավառութիւն, և ամէն տեղ արարական երաժշտութիւն՝ որ սքանչելի ժամանց մը կը պատճառէին մեզի: Թողովրդական այս համակրալից և խանդավառ ցոլցներուն մէջ, որոց մասին արարները մեծ համբաւ ունին (արարական ֆանթազիա կոչելով), կը մեկնինք ուրիշ տեղեր ևս այցելելու: Բայց ես մեծ փափաքով կը սպասէի որ ժամ առաջ

հասնինք Լուքսոր և Գառնակ (հին Թիբեթ) աւերակ քաղաքը որ կը տարածուի Նիդերլանդ ու ձախ եզերքները»:

4. Վերջապէս կը հասնին այդ պատմական աւերակ քաղաքը «աշխարհիս վրայ կ'ըսէ ոչ մի տեղ այսպիսի մեծղի, այսպիսի հոյակապ և խորին տպաւորութիւն թողող շէնքեր չեն տեսնուած. ամենէն անտարբեր և անզգայ մարդն իսկ՝ իւր սրտին խորերէն կը ցնցուի, այս մեծաւայելուէ աւերակներուն առջև. մանաւանդ Գառնակի կիսաւեր մեհեանը, որ մի քանի փարաւոններու կենաց տևողութեան մէջ կանգնուած շէնք մ'է, մարդուս սոսկում կը պատճառէ. 156 սիւներ տակաւին կանգուն կեցած են մեհեանին ներսը. իւրաքանչիւրը 3 մետր տրամագծով և 18 մետր բարձրութեամբ, բոլորն ալ վերէն վար լի հին ժամանակներու տիրող փարաւոններուն պատմութեան արձանազրուկներունով. կարծես թէ, կ'ըսէ, այդ փարաւոնները զգալով որ ժամանակը ամէն ինչ կը հիւծէ կը մաշեցնէ, ուզեր են անոր. դժմ մարտնչիլ կանգնելով այդ հոյակապ շէնքը, իրենց յիշատակը յաւերժացնելու համար ապագայից առջև: Մեհեանին դուռը գետնին վրայ փռուած են սիւներ, կոթողներ և անագին մեծութեամբ քարեր՝ որոնք պերճախօս վկաններ են՝ թէ ժամանակին առջև ամէն ինչ պէտք է մաշի, կործանի ու վերջապէս փնթաւայ...»

«Մի քիչ հեռու, Նիդերլանդ եզերքը Լուքսոր, մի և նոյն տեսարանը կը պարզէ. կոթողներ, խոյակներ, սիւններու մեծ բեկորներ, սփռնաւորու խորտակուած զուխներ՝ անկանգնելի գետին տարածուած են. կործանում ամէն տեղ, աւերակ ամէն տեղ և միշտ աւերակ...»

«Թիբեթ քաղաքին միւս մասը՝ որ գետին ձախ եզերքը կը գտնուի նշանաւոր է Նիդերլանդներու տասնութիւնը հարստութեան փարաւոններու ստորակրեայ պատմական գերեզմաններով, ինչպէս նաև Մեհեանի հոշակաւոր խօսուն արձանովն, որուն պատուանդանին վրայ դրոշմուած տեսանք, կ'ըսէ, արձանազրուկներին հին ժամանա-

կէն որ այդ ծայրն լսողներ եղեր՝ և փառք տուեր են, լսելու արժանի ըլլալուն համար»։

Այս բոլոր հնախօսապատմական վայրերն ու աւերակները զորս Գէորգ արուեստահին կատարեալ ներութեամբը նարտաբորէն կը նկարէր, — շատ անգամ խտիվն ալ զանազան դիրքերով աւերակներու մէջ կեցած, — իր երևակայութեան վրայ այնքան խոր տպաւորութիւն գործած էին, որ Գահիրէի թանգարանին տեսչին հետ նոյն նիւթերու վրայ խօսած պահուն՝ իր անյայտ հետաքրքրութիւնը դահսցնելու համար՝ զանազան հարցումներով մանրամասն լուսարանութիւններ կը խնդրէր։ Այսպէս օր մը երբ այդ շէնքերու կործանման իբր պատճառ Պր. Գրեբոյի մէջ այլոց կ'ըսէ թէ երկրաշարժները իրենց դերն ունեցած են. Գէորգի «բայց ինչպէս կ'ըլլայ որ այս կողմերս այս աստիճան երկրաշարժներ ըլլան որ այդ հսկայ շէնքերն այդպէս կործանին» խօսքին՝ Պր. Գրեբոյ կը պատասխանէ. Պարոն, ես տակաւին ամէնը չեմ տես, ներքեցէ որ շարունակեմ։ Այ՛, կարծէք որ այս անգին անւրակները որ կը տեսնէք պարզ երկրաշարժի արդիւնքներ են. անոնցմէ շատ անելի դատիւները օգնած են այս կործանարար ձեռնարկին։ Երբ ասոնք քրիստոնէութիւնը կ'ընդունին, կրօնամոլութեան բուռն եռանդով վառուած այդ շէնքերուն վրայ ինկան հեթանոսութիւնը և կոտապաշտութիւնը շուտով ջնջելու համար իրենց երկրէն. թէպէտ չափով մը միայն կրցան, զի այդ շէնքերը շինելու չափ կործանին ալ դժուար է։ Շարունակելով իրենց ճանապարհը դէպ ի Աստան, կ'այցելեն նաև Թիլէ կողմում կողքին մէջ Հոռոմայ Տիւբեր և Նիւրն կայսերաց կանգնած փոքրիկ բայց սիրուն մահանքը և մի քիչ հեռու գտնուող առաջին ջրվէժը. «Հոռոմայեցի այս կայսրներն իրենց այս մահանով կարծես ուզեր են մրցիլ փառաւորներու, կ'ըսէ, բայց որքան հեռի կը մնան, բաղձատուրեամբ անոնց հոյակապ և վեհաշուք շէնքերուն մեծփայլութեան»։ Այս մահանին մէջ՝ որմին մէկ կողմը տեսանք

կ'ըսէ, յղկուն սև մարմարեայ քարի մը վրայ ոսկեգոծ տառերով փորագրուած արձանագիր յիշատակարան մը Նապոլէոն Բոնապարտի կողմէ գետեղուած՝ իր լայնութեան արժէքը խտիվն ուզելով անոր օրինակին հետեիլ, ինքն ալ կը յանձնարարէ Պր. Գրեբոյի՝ իր այս այցելութեան յիշատակը արձանագրութեամբ մը յաւերժացնել։

Վերին եղբայրտսի մէջ 39 օր մնացին, կ'ըսէ Գէորգ, և արդէն այսչափս ալ շատ էր մեր համակրելի խտիվ թեւեւ բաշայի համար, որ ժամանակ ժամանակ զիս կը քաջալերէր յոգնութիւններու համար. թէ և ինքն ալ զիտէր որ ես մեծ հաճոյք կը զգայի աշխատութեանցս համար. և արդարեւ կենացս մէջ կրնամ ըսել որ այս շահեկան ուղևորութիւնը ամենամեծ հաճոյք պատճառած է ինձ։

Գահիրէ վերադարձին՝ Գէորգը քաղաք լուսանկարած վայրերուն ապակիները ամենայն խնամքով տպելով և զանոնք թղթով ներու մէջ գետեղելով խտիվին և իր տիկնոջ լիմինէ հանքմին կը նուիրէ, որոնք անհուն շնորհակալութիւն յայտնելով, զինքը կը վարձատրեն ճոխբար և՛ այսպէս Ապտուլահ Գէորգայ գեղեցիկ արուեստին միջոցաւ, այդ պատկանելի հնութեանց մնացորդներն արժանի կ'ըլլան արուեստագիտական աշխարհի ծանօթանալու։

Ե. Գէորգը Ապտուլահ իր խղճամիտ և պատուաւոր արուեստագետ, իր համբաւին արժէքը միշտ բարձր բռնեց, նուիրելով իր կեանքն ու տաղանդը արուեստին կատարելագործութեան։ Հաճոյքը զոր կը զգար ան և կը վայելէր արուեստին յաջողութեան մէջ, զինքը անելի ևս կը մզէր օրէ օր իր ջանքերը յարատև կրկնապատկելու։

Սրբուհի Տիւսարի հետեւալ տողերը հնուն արձագանգներն են Գահիրէի մէջ ունեցած փայլուն յաջողութեանց. «... Կ'ուրախանամ անհունապէս ճու յաջողութեանդ վրայ, երկինք վարձատրեն միշտ ճու առաջընտրութիւնդ...» և դարձեալ՝ «Նյա մակը՝ ազնիւդ իմ բարեկամ, կը պարու-

նակէր չուր մի՝ որով համայն էութիւնս ցնծաց, ահա մաղթանացս իրականութեան սկզբնաւորութիւնը. կզգամ թէ յաջողութիւն, մանաւանդ մեծ յաջողութիւն պիտի ունենաք, վասնզի, կը հաւատամ արդարութեան և առաքինութեան. ուրախ եմ, ուրախ և շատ ուրախ այն արքայական յարաբերութեան համար որով կը հանդիսադրէք նոր եղանակը... Բիւր մաղթանք յաջողութեանդ շարունակութեան համար»:

Հոս իբր ամէնէն աւելի մեծ գումական Գէորգայ փայլուն յաջողութեանց կ'արժէ արձանագրել Անգղիոյ Գալլէս իշխանին բարձր գնահատումը, որով կը շնորհէ կրկին գրեթով՝ Արքայական լուսանկարչի տիտղոսը կրելու պատիւը:

Այս գրեթէն առաջինը կը կրէ 1890, մայիս 22, իսկ միւսն՝ յունիս 16, որոնցմէ առաջինին թարգմանութիւնն է հետեւեալը:



Malborough house Pall. Mall. S. W.

22 Մայիս 1890

Տիարք Ապտուլլահ Եղբարք

Հաճոյք ունիմ Ձեզի ծանուցանելու՝ թէ Գալլէս իշխանը կ'արտօնէ զի՝ զՁեզ անուանելու նորին Արքայական Բարձրութեան լուսանկարչի ի Գահիրէ:

Մեծ անմուկէր ծառայ Տալթըն Մ. Փրոպին
Արժանագիր Գանձակալ պալատան
Նորին Արքայական Բարձրութեան Գալլէս իշխանին

Աւելորդ կը համարիմ երկրորդին թարգմանութիւնը, որ գրեթէ մի և նոյն է, և որուն կրկնուելուն պատճառը անծանօթ կը փնտռուի Ձմառյալ Չմոտանք յիշել որ ճիշտ թուականիս զարմանալի զուգահեռութեամբ մը օամ. կայսերական բոսորան ալ կը վերադարձուի, որուն ինչ պարագաներու մէջ ետ անտուիլը կանխաւ յիշատակած ենք:

7. Գահիրէի Լուսանկարչական Մասնակցը, որ Գէորգ Ապտուլլահի փայլուն գործունէութեամբ ինը տարուան շրջան մը բոլորեց, 1895 թուականին վերջնական

կերպով կը փակուի, և Գէորգ որ վերջը ճանչցողներուն սէրն ու համակրանքը զրաւած էր, յաւէտ յիշատակելի անուն մը թողլով, կը մեկնի Պոլիս իր սիրելիներուն մօտ, որոնցմէ ոմանք արդէն իրենց մահ, կանացուն կնքած լինելով, իբր զգայուն սրտին կարեւոր խոց պատճառած էին. ինչպէս կը գրէր իրեն Ս. Տիւսար Ըսելով՝ թէ 4... ահա զու կը զրկուիս քու նիցս վերջին ողջոյն ապուս սե հաճոյքէն քու սիրելեացդ»:

Գէորգ Պոլիս վերադառնալէն յետոյ, տակաւին մինչև 1899 թուական կը շարունակէր իր արուեստը, բայց ամենաժանր պարագաներու տակ որովհետեւ իր եղբարք ջոպլ կեանքը և անհաշիւ ծախքերը այս գեղեցիկ հաստատութեան հիմարը քանդած էին և պարտքերը բարդուած, որով կը հարկադրուին վաճառել իրենց տիգերահամարաւ անունը և գործատունը իր բովանդակ կազմածով՝ Սիպահ լուսանկարչատան 1200 օամ. ոսկիի, վերջնական կերպով քաշուելով այդ ասպարէզէն:

8. Այս մասին՝ ինչպէս նաև Գէորգայ երէց եղբոր՝ Վիլհէն Ապտուլլահի տիւրը վախճանին վրայօք, արժան կը համարիմ քաղուածով մէջ բերել հետեւեալ տողերը, Ապտուլլահան ընտանիքին մօտէն ծանօթ բարեկամէ մը զբաժնաւորէին: Այս աղետալի դէպքին պատճառը, կ'ըսէ մեր բարեկամը, ըստ իմ խոնարհ կարծեացս պէտք է փնտռենք յոռի վարչութեան պարտուց և անհաշիւ միստուքներու մէջ. սակայն արդար լինելու համար՝ պէտք է ըսել որ ողբացեալ Գէորգ Ապտուլլահ, իր անբասիր և խնայասէր կենցաղովը, պատասխանատուութեան ամենադոյզ բաժին մը չունի այս խնդրոյն մէջ. պատասխանատուութեան ամենամեծ բաժինը կը պատկանի միւս եղբարք, որով այսպէս անփառունակ վախճանի մը տիրացան, թէպէտ ի վերջոյ իրենք ալ զգացին այս անաւոր հարուածին ազդեցութիւնը, բայց արդէն շատ ուշ էր. անողոր զօրաղղութեան անազանգը յուսահատութեան կը մասնէ իր Վիլհէն

եղբայրը, որ չըստորութեան ճիրաններէն ազատելու յուսով, թուրք պալատականներուն փայլուն խոստովանութենէն շլացած, իսլամական կրօնը կ'ընդունի Ապտուլլահ Երիւրդի անունով, հանդերձ իր երեք անչափաճառ զաւակներով, որոնց երկուքը ի Կ. Պոլիս, և փոքրն ալ ի Լոնտոն կ'աժառանայ անգղիացի օրիորդի մը հետ, իբրեւ իսլամ, որով կրկնակի ալ պատճառ կ'ըլլայ բարոյապէս ևս նսեմացնելու իրենց համբաւը և սեպնելով իր հոգին՝ ուրաջութեամբ քրիստոնէական մարդու կրօնին, թէպէտ ի ժամու օրհասականին քաջութիւն կ'ունենայ մեղայ գոչելու, և երիցս խաչակնքելով, ի սարսափ կը մատնէ իր մահինը շրջապատող իսլամները և հոնաները, որոնք իսկոյն կ'երթան բողոքել կրօնից նախարարին թէ ուրացող է. որոց ի պատասխան նախարարը կը յանդիմանէ զիրենք յարելով թէ «իւշ ճիթապ տրբ». և առանց տարածայնութեան հրաման կու տայ թաղումը կատարել ըստ իսլամական օրէնքին կայսերական զանձն վճարուելով յուզարկաւորութեան ծախքերը և կրկին իրաւաւորութեամբ անոր մարմինը կ'ամփոփուի Մաջաբ բարձրաստիճան անձինքն, որու յատուկ թիւրպէի մը մէջ իր յանկարծահան մահը՝ չի կարծուի որ քնական եղած լինի, ինչպէս որ երևոյթները ցոյց կու տան Որովհետեւ առաւօտ մը կանուխ, իբր թէ կարևոր գործի մը համար պալատ կը կանչուի, և վերադարձին կտռըին մէջ անտանելի խիթեր կ'ունենայ և տուն հասնելէն քիչ յետոյ հոգին կ'աւանդէ, որով առ հասարակ այն կարծիքը կը տիրէ որ իր մահը թունաւորման մը արդիւնք է...

9. Փակենց այս տխուր էջը, որ Գէորգայ հակապատկերը կը ներկայացնէ. և նշանակենց հոս, լուսանկարչական այս երկարամայ շրջանին Գէորգայ և իր եղբայր լուսանկարած բազմաթիւ երևելի անձնաւորութեանց ըստ բախտի յիշուած հետեւեալ անունները, որք են՝ Էփենդի կայսրուհին իր Կ. Պոլիս այցելութեան առթիւ. Վիլհելմ կայսեր հայրն՝ Փրեզերիկ,

Ռուսիոյ կայսրն՝ ցարեւիչ եղած ժամանակը թուրքիոյ կայսրներն և իշխանազունք սկսեալ Ապտուլ Մեհմետէն և Ապտուլ Ալիզէն, Եղիպտոսի խաիվ իսմայէլ բաշա, Վիկտոր Էմմանուէլ Խա. Թագաւորը և իր երեք որդիք. Աւստրիոյ Ֆրանց ժոզէֆ կայսրն և Անգղիոյ Եդուարդ թագաւորն և իր որդին. ինչպէս նաեւ Պարսից Նասր Էդին Շահն, Ռումանիոյ, Պուլկարիոյ և Սերպիոյ թագաւորներն տակաւին իշխան եղած ատեննին. և ուրիշ երկար շարք մը բաշաներու և երոպական դիւանագէտ բարձրաստիճան անձեր, իբր վարձատրութիւն և զնախաւորութիւն ստանալով 8 շքանշաններ, 3 միտայլներ և շնորհաւորական և դրուստեաց շատ մը նամակներ:

Ն.

1. Գէորգ Ապտուլլահ իր հաճոյակաւ տար և ձգիչ քնաւորութեամբը, բոլոր զինքը ճանչցողներուն սրտին մէջ լաւագոյն տեղը կը զբաւէր, այլ նաեւ իր լուսաւոր և ստող զողափարներով, ինչպէս նաեւ ի մաստատելի և բարոյազէտ լըջախոհ մտքով, մտաւորական և բարձր զանազանքի անձաց մօտ մեծ յարգանք և համակրանք կը վայելէր:

Իր բարեկամական շրջանակը կը կազմէին ժամանակին ծանօթ և զբական ղէմքերէն Գր. Չիլինկիրեան, Յ. Թորոսեան, Թ. Թերզեան, Միք. Փորթուզալ, Խորէն Նարայէ, Թ. Եսայեան, Մկր. Անճաւան, Օրմանեան, Ս. Թալլեան, Յ. Ալեւուր, Ս. Վրդ. Պարոնեան, Ռ. Պէրպէրեան, Մ. Չերազ, Տիկ. Ս. Տիւսար և ուրիշներ, որոնց ամէնէն յարգուած և սիրուած ղէմք մ'էր. Թանայի այս կամ այն ընտանեկան երկկոյթներուն մէջ իր հաճոյալի մասնակցութիւնը բերելով, և տեղի ունեցող ասուլիսներուն՝ իր շահեկան և կենցաղօգուտ տեսութիւնները պարզելով, ունկնդրաց վրայ խոր ազդեցութիւն կը գործէր. Մէկ խօսքով ան որքան արուեստի մարդ, նոյնքան ալ զբասէր և զբամուտ, զխէր արժեքներ ինքզինքը, ըստ պարագային՝ ամէնէն աւելի զարգացեալ միջավայրի մէջ:

Հոս կ'արժէ յիշատակել զբազան երեկոյթի մը մէջ պարզուած բնորոշիչ աղուոր տեսարան մը, զոր նոյն երեկոյթի ներկանեւքէն Տիար Միհրան Յովհաննէսեան կը հաղորդէր ինձ փետրուար 21 թուակիր մէջ նամակովն (1925):

Երեկոյթը տեղի կ'ունենայ 1884ին որուն ներկայ կը գտնուին հետեւեալ ղեմաքերը. Միրտիչ Աճեմեան, Սրապիոն Թըզըլեան, Տիկին Փոփովիչ, Թնկըրենք, Սազըզներն, Գէորգ Ապտուլահ, Միհրան Յովհաննէսեան և այլք: Այս առթիւ Պետրոս Աղամեան յատկապէս հրաւիրուած էր Միշագիւղէն, երեկոյթին մէջ արտասանելու համար Georges Ohnetի *Le Maître de Forges*, և իր ապագայ կեանքի ուղղութիւնը կախուած էր կարծես հոն ներկայ եղողներուն վճռէն:

Մեր անգլոպական ղերասանը այնքան հրաշալիօրէն կը կատարէ իր դերը որ, երբ զինքը հիացմամբ մտիկ ընելէ յետոյ ներկաներու ծափահարութեան տարափով մէկ կողմ կը քաշուի, յանկարծ Գէորգ Ապտուլահ իր լուրջ և թրթրուն ձայնով իր պատգամը կ'արձակէ ըսելով.

«Իմ երիտասարդ բարեկամ, լաւ, շատ լաւ ապրեցուցիր հերոսդ: Ամէնքս ալ յուզուեցանք, չէ թէ Georges Ohnetի այս գլուխ գործոցէն՝ հապա նաև անոր երկին քու առած սքանչելի դարձուածքէն: Դու նկարչութեան մէջ բաւական զարգացած ես՝ որպէս զի քու ներկայացնելիք հերոսներուդ նկարագիրը վերակազմես, բաւական աղուոր կը տաղաշափես

որպէս զի իրեն բանաստեղծ ի հարկին քու հերոսիդ զիրքն ու դերը հնարես, բայց մանաւանդ զգայուն սիրտ մը ունիւք մարդուս կենանքը լալու և լացներու:

Այո, տղաս, դուն այսօրուքնէ կատարեալ դերասան մըն ես և պէտք է որ քու կոչմանդ հաւատարիմ մնաս: Բայց ուր է Յակոբ Պէյ Պալեան, ուր է Տիկինն Բեմպէլ Էդշեան, Արուսեակ բեմէն քաշուեցան, հոս քեզի համար ապագայ չի մնաց. Մաղաքեան կօշիկի կաղապարներու վրայ ծռած կը մաշի: Գնա՛, հերտասարդ բարեկամս, կովկաս գնա՛, հոն բաղդը քեզի պիտի ժպտի: Գու ջինջ արտասանութիւնդ, քու ներշնչեալ անձդ գանոնք պիտի հմայէ և պիտի վարձատրուի. ու երբ ազէկ մը կշտանան և ուժերդ քամուին, քու փառքիդ զազաթնակէտը հասնելուդ, ո՛վ գիտէ, քեզ թերևս մեզի վերադարձնեն և մեր բազուկներուն մէջ քեզ զրկարաց ընդունինք»: Կը լռէ Ապտուլահ, կը լռեն նաև ներկաները, և տխուր նախազգացումի մը ճշման տակ իրարմէ հրամբշտ կ'առնուն այդ գիշերը, որ «Աղամեանի համար ճաւատագրական ժամը հնչած էր, կ'ըսէ Միհրան Յովհաննէսեան. ուր էր զինք չի զրկէինք կովկաս, ուր քիչ մը փառքի այսինքն քիչ մը ցնդող ծուխի փոխարէն իր կեանքը վրայ տուաւ: Խեղճ տղայ, ինչ աղուոր երիտասարդ մըն էր, և սակայն 1889ին Նշան Թաշի Ռուսաց հիւանդանոցէն ինծի զրկած լուսանկարին մէջ ո՛րչափ այլափոխուած է՝»:

Այստեղ Միհրան Յովհաննէսեան՝

1. Այդ լուսանկարը զոր Միհրան Յովհաննէսեան ինձ նուիրեց, ստորեւ կը կրէ հետեւել ընծայականը Աղա մեանի նկագրով. «Նուէր Պալուկի և Բեմպէլի Հեղինակին, Սփոփողին ուսման, Միհրան Տէ. Յովհաննէսեանի, 1889. Պետրոս Աղամեանից»:

2. Նոր Լուր 266 Թիւին մէջ կը գտէր յանկարծաւ կան ծառ մեր համակրելի բարեկամին Միհրան Յովհաննէսեանի, 1925 նոյեմբեր 21ին, կէտիկ բաշայի ծաղովարանին մէջ, զորք զպիտի վրայ բանաստեղծ միւլընքի, խորունկ վիշտ և ցաւ պատճառելով իր պարագաներուն: Բարեկամներու և մտաւորական գասուն Հանգուցեան արդէն ծառից ղէմք մ'է ոչ միայն իր մեղուա-

շան և հմուտից զբական, բանասիրական և այլ աշխատութիւններով, այլ նաև իւր խղճմիտ զատարարականութիւնը, երկար տարիներ վարելով նոյն պաշտօնը, զանազան վարժարաններու մէջ, ինչպէս նաև ստանձնականներու: Պրանսերէն լեզուի մէջ ունի խոր հմտութիւն, որպէս և Անգլիերէնը ու տեղական լեզուներու:

Մեր նպատակէն շեղած պիտի ընամարտինք անդուշտ եթէ իր աստեղականէն զգու պիտի անգլիական անդարձ մեկնուին առթիւ արժանազանքն հոս ինձ զբաժ վերոյիշեալ նամակին մէջ սահնդուցած հետազայ տողերը, որոնք որքան Գ. Ապտուլահի նոյնքան իր անհասական կեանքի վերջելունքներ կը պարձանակեն:

կ'աւելցնէ նաև ըսելով թէ, «այնքան ազդուներ էի Պ. Աղամբանի այդ արտա-սանութիւնէն որ առանց զգալու՝ իմ Արեւելքի մէջ հրատարակած Նաւավար Գրիւ-գորի սկիզբը՝ տարիներ ետքը նմանցուցեր էի Le Maître de Forges-ի սկիզբին»։

Դատաւորներ նստեր ինչժև կը խորհին։ Արդար պատիժը տալ թլուսու Գրիգորին։ Գիտեմ, յանցաւոր եմ, ձեռքս ատի դանակ, թող օրէնքը վրաս տանի յաղթանակ»։

Իմ այն հարցումիս թէ ինչ գաղափար կազմած է, և ինչ զիտէ Գէորգ Ապտու-լահի կեանքի մասին, հետեւեալը կը պա-տահախնէ՝ «... Միթիթարեանց բարեհամբաւ Միարանութեան երբեմնի սաներէն և կայ-սերական լուսանկարիչ Գէորգ Ապտուլահ կ'ապրէր Միկրտիչ Անճանի, Պետրոս Աղա-մեան, Միքայէլ Փորթուկալ, Սազըզ Յով-հաննէս, Սրապիոն Թղընեան և իմ Հայ լէնգուի սիրելի ուսուցիչ Թ. Թերզեանի մտերմութեան մէջ, որոց յետոյ միացաւ Կարապետ Գարագաշ են... Երբ Ա. Մ. Գարագաշ մեր վարժարանին դասախօսու-թեան հրաժարեցաւ, իրեն յաջորդեց Թ. Թերզեան, որ իր դասախօսութեան նիւթը և իր անձը հաւասարապէս սիրցուց մեզի։ Այդ առթիւ 1871ին մեզի ծանօթա-

ցուց Մ. Անճանի յայտը եւ արտասուքը և 1872ին Գ. Ապտուլլահի Բեհնագիրը Հայաստանեայցը, որով առաջին պատե-հուծիւնը ունեցաւ ձեռ կենսագրելիք ան-ձին վրայ մօտէն զաղափար մը կազմելու։ Գէորգ Ապտուլահ իր բարեհամբոյր վարժմանքով և նրբանկար կենցաղագիտու-թեամբ եւրոպացիներու համակրութիւնը շահած էր իր վարած հաստատութեան ի նպատակ և ի շահ թուրքիոյ որ իր մէջ կը տեսնէին Օսմանեան Պետութեան արժան-ընտիր գաւազներէն մին։

Տարակոյս չը կայ թէ նոյն միջոցին մեր երկրի արքայական գերդաստանը անոր հաւատարմութեան և անզուգական բարեկրթութեան հետ նաև գնահատեց անոր բնածիր հանճարը և լուսանկարչու-թեան մէջ եւրոպացի հիւրերուն սքանչա-ցում առգող հմտութիւնը... Գէորգ Ապ-տուլլահի համարարութեամբ և գեղարուես-տական ճաշակով պատրաստուած լուսա-նկարները օտար ղեւանդատական մարմնոյն համար մէկմէկ զլուս գործոցներ էին...։

Երբ կեանքիս անցեալ էջերը թղթատեմ, դեռ հոն բաւական առիթ պիտի գտնեմ Գէորգ Ապտուլլահի հանդիպելու։ Ջոր օրե-նակ, երբ Թ. Թերզեան Հ. Ալիշանէ ըն-դունած երկտող կարգաց Գ. Ապտուլլահի,

«... Ջոր բարեհամբաւ Միարանութեան համակրելի սանը Թ. Թերզեան Ջոր անցեալը ներկայէն մօտ բե-րաւ և մեզ խնդավայեց առ հասարակ ուստի հիմնե-ցինք Գարդնասիւրաց ընկերութիւնը, որ յետոյ միացաւ Կիլիկեան, Արարատեան, Արեւեան ընկերութիւննե-րուն հետ։ Այն ժողովին որ Միացեալ ընկերութիւնը կազմեցին՝ մեր լիախէ աշակերտներէն ներկայ էին Ս. Տամատեան, Զովհաննէս Թորոսեան, Միհրդատ Կորտա առեկեան, Յակոբ Պոյաճեան, Կարապետ Սվաճեան, Երուանդ Թընկեր, և, Գարբէշ Կորատուկեան, Թով-մաս Թերզեան և Գիւրգ Ապտուլլահ։

Մեր մէջէն Ս. Տամատեան, Ս. Սվաճեան, Զովհէփ Երուանդեան են, հիմնեցին Արեւից լրագրէր, որուն մէջ ատեն մը իմ ժողովրդական երգեր հրատարակեցի։ Բայց մեր մէջէն խուսմ մը՝ ձեռնարկեց ամէն կիրակի Բան-կաթիի գրեթեմանատան մատուոյն մէջ, գաւառացոց դասախօսել. այդ խուսմբէն մէջ կ'ալին Երուանդ Թընկեր և եւ։

Այդ, գասեր լմնալն ետք, Երուանդ Թընկեր զիս իր տունը կը տանէր, որ բմ գասառուին Թ. Թերզեանի

տան կից է։ Իւսակ թէ ինչպէս իմ հասարակութիւնս տար բեր հասարակութեան մը զոները իմ առջև լայն բա-ցուեցան և այս շնորհալի, բարեպաշտ ազնիւ անձը՝ (կ'ականդէր Գէորգ Ապտուլլահը) իր անպաճաղ պար-զութեան մէջ իմ յիշողութեանս մէջ ապաւորուեցաւ։ Թ. Թերզեան ինձի առաջարկեց Ս. Յակոբայ անկեանոցին սակաւաթիւ աշակերտներուն ուսուցչութիւնը ստանձնել։ Քննութեան ատեն, Միքայէլ Փորթուկալ, Յ. Կէզէհանեան Թ. Թերզեան և Գ. Ապտուլլահ են զոն մնացին ու առաջնորդուեցաւ ստանձնելու դասեր Համագեղաց վար-ժարանին մէջ և յետոյ ճանչցաւ Տօթթ. Սեւան, որ զիս հաւիրեց Միշնգիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժա-րանն, ուր Հանդիպեցայ առաջին անգամ Կորայր Բիւ-գանդացիին և զարմեմ Գ. Ապտուլլահ, Թ. Թերզեան։ Միքայէլ Փորթուկալ անբաժան ժառերիմներուն։

Կը տեսնեց թէ ինչպէս պարագաներու բերժամը Սազը Արմենակ Պէշի, Ասթիւնէ Ժիւրբի, Եղաւադ, Հրանդ և Լևոն Թերզեանի ուսուցիչ եղալ, և միջոց մը զբեթէ շարաքը ըսր Գիշեր Բանկալիի իմ պաշտպաններու հիւրընկալու երգելին տակ անցուցի կեանքը...»։

Վարէ՛ արորդ, արագ քշէ, որ հասնիս
ես նամբուն կէսն եմ գուցէ չես գտնիր զիս.

Գէորգ իսկոյն գոչեց. «Պէտք չկայ անու-
նը տալու թո՛վմաս, այս կշռուած տողերը
մեր աննման վարպետինն են»:

Բայց ուր են հիմա, Գարագաշ, ՄԻՔ.
Փորթուկալ, Յ. Սազըզ, Սրապիոն Թղլեւան,
Թ. Թերզեան և Գէորգ Ապտուլլահ: Ամէն
մարդ աշխարհիս մէջ իտէալ մը կը հե-
տապնդէ, ամէն մարդ կ'ուզէ մեծ ըլլալ:
Գէորգ Ապտուլլահ համեստ, խոնարհա-
միտ և հմուտ անծ մըն էր ու ջանաց մարդ
ըլլալ և յաջողեցաւ ալ: Կեցցեն իր վար-
պետները, կեցցեն Վենետիկեան Հարք»:
(Շարայարելի) Հ. Ե. ՏՈՅՅԵՏ



ՊԱՏՄԱԿԱՆ

ՆՈՒԹԵՐ ՊՈՒԼԻԳՐԱՆՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՊԱՆԱԳԻՐԲ ԶԻԼԻԳԷԻ ԵՒ ՈՒՐԻՇՇ

ՊՈՒԼԻԳՐԱՆՈՅ ԳԱՆՈՒԹՆԵՐՈՒ

Բազմավէպի քանկագին էջերուն մէջ մաս
մաս լոյս տեսնող այս ՆՈՒԹԵՐն յօդուածաշարքը
որտախ եմ որ սկսած է արդեն օգտակար ըլլալ:
Այս անգամ պիտի ներկայացնեմ գերեզմա-
նաքարերու արձանագրութիւնները. ասոնց մէջ
պիտի պատահի՞նք անոններու, որոնց արդէն
հանդիպած ենք ՆՈՒԹԵՐուն ընթացքին: Յանկս
կազմած եմ ընդհանուր պատերազմի ժամանակ
Այս քարերէն մեծ մաս մը նոյն ատեն ժախտե-
ցան քարակոփներու, այսպէս առ յաւելու կոր-
սուելու մատուցելով. քարերադրար կրցայ իր
ժամանակին այդ քարերուն մեծամասնութեան
արձանագրութիւնները հասարկել: Այժմ քանի մը
հաստ տապանաքարեր կը մնան ի Ֆիլիպե
գործածուած իբր սալաշատակ եկեղեցւոյն մէջ
ու շուրջ: Միւս քաղաքաց տապանագիրներուն
մասին ուրիշ քան մը չեմ գիտեր եւ հաշմանա-
քար շատ ոչինչ թիւ մը կը մնայ աննցովեւ ալ:
Կարծեմ Ռուսաձօնի տապանագիրներուն մէկ
մասը հրատարակուած է Հանդէս Ամսօրեայի
մէջ¹: Իսկ Թաքար Բագարձըրիները արդէն ես

1. Հանդէս Ամսօրեայ 1912 թիւ 8.

2. Բագմ. 1929, թիւ 1.

այդ քաղաքին գաղութին պատմութեամբ միա-
սին լոյս ընծայեցի Բագմավիպի նախորդ րիւն-
րէն մէկուն մէջ²: Հետաքրքիրները գոհացնելու
համար ըսեմ նաեւ որ Ֆիլիպի քարերուն մեծ
մասը (թիւով 35-40) ասկէ տասն տասներկու
տարի ատշաճախողեցան գերեզմանի քարակոփ
Պուլկար Թաշիւի, որուն բացօթեայ աշխա-
տանոցին մէջ երեք շտաբներու երկար շրջա-
նին հաւաքեցի ներկայ գրութեանց մեծ մասը:

Թիւ 1. — Ֆիլիպի հնագոյն գերեզմանա-
քարն է հետեւեալը, որ կը գտնուի Ս.
Գեորգ եկեղեցւոյն ձախաւորաց պահարանին
դրան աջ կողմը. կը ժառայէ իբր նստարան
եւ կը պահէ իր կոշոք շաւառիկէն ձեռք նսեւ
փորագրեալ գրութիւնը ամբողջութեամբ, որ է.
«Աս է տապանս դիւանապետ Մեծատուրի որդի
Աբրահամի որ փոխեցաւ առ Ած. Թիւն Ռ. ձ.
Խ. Զ.» (1697).

Թիւ 2. — Եկեղեցւոյն գաւիթին ձախ կողմը
գեղեցիկ եւ անաղարտ

Նորաստիկ Տէր Պօղոս վարդապետ
Ազրիանուպօլսեցի, աշակերտ
Տեառն Սարգսի Արքեպիսկոպոսի
Առաջնորդի վիճակիս:

Հօգուցի շնորհաց ընդունարան.
Քարող բանին ճշմարտութեան.
Ձօր կողէ տէր կանուխ յառեաց.
Շնորհել նախ պշտակ փառաց,
Ի ժամ փոխման ի կենցաղոյս,
Տեսչամբ գուէր Յիսուս Յիսուս,
Առ որ դիմաց գուարեակից,
Գուով ամաց իբր երեսնից,
Դու տէր զգաս ընդ սուրբ քո,
Երկնից խորան փառօք հանգու:
1851 յուլիս 1

Թիւ 3. — Եկեղեցւոյ շրջափակին մէջ իբր
սալաշատակ գործածուած է:
Շիրիմս է Մանեսի Ստեփանեան աստուածա-
սէր կարո մարիայի

1841

Ազգիս բազմաթիւ աշտ ազնիւ իշխան,
Սիրոյն աստուծոյ հոգին վառարան,
Տեսչամբ փառաւոր մտօք խոհական,
Սիրոյ ընկերին՝ սիրտ իւր օթեւան,
Ճրագ՝ լուսաւոր՝ գործովք բարութեան
Պսակ արեւադար տոհմին իւր համայն,
Բարութեամբ հասնալ յալիս ծերութեան.
Շիրիմս ի հողմոց խոտաշունչ մահուան,
Թողու իւր որդիս հայրենեաց արժան,
Ըստ իւրեանց կարի խնկեաց գաւազան